ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2023-4-1-Ա

ք. Երևան 31.03.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի մարտի 31-ի նիստում քննարկեց 2023 թվականի փետրվարի 20-ին հայտատուի ներկայացուցիչ Սանասար Գևորգյանի կողմից ներկայացված՝ Aquis Hairsciences Inc. ընկերության (621 Sansome St. San Francisco CA 94111, US) «K18» (IR1545823) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված հիմքերով գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք չունեն տարբերակիչ հատկություն և առևտրում ծառայում են ապրանքի տեսակն ու ստեղծման նպատակը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված բառային ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ այն բացառապես բաղկացած է ապրանքի տեսակը նշող տարրերից, այն է՝ «K18» (Keratin 18), կերատինների խմբին պատկանող սպիտակուց, որն ունի պաշտպանական նշանակություն և պատասխանատու է օրգանիզմում էպիթելային բջիջների կառուցվածքային ամբողջականության համար: Այն լայնորեն կիրառվում է դեղագործական միջոցների, կենսաբանական հավելումների, մաշկաբանական և կոսմետիկական միջոցների մեջ՝ մարդու մաշկի կամ մազերի արտաքին շերտին պաշտպանություն հաղորդելու համար, այսինքն՝ «K18»-ը նշում է, որ հայտարկված ապրանքները պարունակում են կամ տոգորված են «կերատինով (սպիտակուցով)»:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի դրույթների

գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք չունեն տարբերակիչ հատկություն և առևտրում ծառայում են ապրանքի տեսակն ու ստեղծման նպատակը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված բառային ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ այն բացառապես բաղկացած է ապրանքի տեսակը նշող տարրերից, այն է՝ «K18» (Keratin 18), կերատինների խմբին պատկանող սպիտակուց, որն ունի պաշտպանական նշանակություն և պատասխանատու է օրգանիզմում էպիթելային բջիջների կառուցվածքային ամբողջականության համար: Այն լայնորեն կիրառվում է դեղագործական միջոցների, կենսաբանական հավելումների, մաշկաբանական և կոսմետիկական միջոցների մեջ՝ մարդու մաշկի կամ մազերի արտաքին շերտին պաշտպանություն հաղորդելու համար, այսինքն՝ «K18»-ը նշում է, որ հայտարկված ապրանքները պարունակում են կամ տոգորված են «կերատինով (սպիտակուցով)»:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ փորձաքննության կայացրած որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել հայտատուի ներկայացուցիչ Սանասար Գևորգյանի կողմից ներկայացված Aquis Hairsciences Inc. ընկերության «K18» (IR1545823) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ